



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 12
«-----» ----- 2012թ.

74
Թիվ -----

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ
ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, ընդառաջելով Արշակ Պողոսյանի, Գեղամ Մաթևոսյանի և Նաիրա Հովհաննիսյանի խնդրանքներին .

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության ներքոհիշյալ հողատարածքները քանի որ հնարավոր չեն օտարելու որպես առանձին գույքային միավորներ, ողղակի վաճառքի կարգով, գործունեությունն ընդլայնելու նպատակով թույլատրել օտարելու՝

- Վերին Արտաշատ խճուղի թիվ 3 հասցեում Արշակ Պողոսյանի սեփականությունը հանդիսացող շինության հարևանությամբ գտնվող 31,3 քմ մակերեսով հողատարածքը՝ Արշակ Պողոսյանին.
- Օգոստոսի 23 փողոցի թիվ 89/ա հասցեում Գեղամ Մաթևոսյանի սեփականությունը հանդիսացող շինության հարևանությամբ գտնվող 47,2 քմ մակերեսով հողատարածքը՝ Գեղամ Մաթևոսյանին.
- Օգոստոսի 23 փողոցի թիվ 47/1 հասցեում Նաիրա Հովհաննիսյանի սեփականությունը հանդիսացող շինության հարևանությամբ գտնվող 100,0 քմ մակերեսով հողատարածքը՝ Նաիրա Հովհաննիսյանին.



2. Հողատարածքների ուղղակի վաճառքի կարգով օտարման գները հաշվարկել նրանց կադաստրային արժեքների 100 %-ի չափով:

Որոշումն ընդունվեց միաձայն՝

Բենիամինյան Կարեն	Դերմոյան Արման
Թադևոսյան Արման	Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան	Հովհաննիսյան Վազգեն
Մանուկյան Ժորա	Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ	Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ	

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ԳՄՈՒԴԱՐՅԱՆ